ՀՏԴ 373 (479.243) *Գրականություն*

Արմինե Մովսիսյան
Ստեփանակերտի Անդրեյ Սախարովի անվան
հ.8 միջնակարգ դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
armine808@mail.ru

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊՈԵԶԻԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Սույն հոդվածում դիտարկվում ու գնահատվում են նորագույն շրջանի հայ պոեզիայի արցախյան գրական ընտանիքի նվաճումները: Ներկայացված են 20-րդ դարի երկրորդ կեսին ասպարեզ իջած և ճանաչված արցախցի բանաստեղծների՝ Գ. Գաբրիելյանի, Հ. Բեգլարյանի, Վ. Հակոբյանի, Ս. Խանյանի, Ա. Հովհաննիսյանի և մյուս գրողների ստեղծագործությունների վերլուծությունը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձված ժողովրդի պատմական անցյալը և արցախյան ազատագրական պայքարն արտացոլող քնարական բանաստեղծությունների և պոեմների ուսուցմանը:

Բանալի բառեր՝ հայրենիք, Արցախ, պայքար, դպրոց, սովորողներ, պոեզիա, Արցախի գրական ընտանիք:

Армине Мовсисян

ПРЕПОДАВАНИЕ ПОЭЗИИ, ПОСВЯЩЕННОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ АРЦАХА В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ ШКОЛЕ

В этой статье рассматриваются и оцениваются достижения арцахской литературной семьи армянской поэзии в новую эпоху. Представлен анализ работ признанных поэтов Арцаха: Г.Габриеляна, Г. Бегларяна, В. Акопяна, С. Ханяна, А. Оганесяна и других авторов, которые вышли на арену во второй половине 20-го века. Особое внимание уделяется преподаванию лирических стихотворений и поэм, отражающих историческое прошлое народа и освободительную борьбу Арцаха.

Ключевые слова: Родина, Арцах, школа, борьба, учащиеся, поэзия, литературная семья Арцаха.

Armine Movsisyan

TEACHING THE POETRY DEDICATED TO THE NATIONAL LIBERATION OF ARTSAKH AT THE GENERAL EDUCATION SCHOOL

This article examines and evaluates the achievements of the Artsakh literary family of Armenian poetry in the new era. The analysis of the works of recognized Artsakh poets, such as G.Gabrielyan, H. Beglaryan, V. Hakobyan, S. Khanyan, A. Hovannisyan, who entered the stage in the second half of the 20th century, are presented in the article. Particular attention is paid to the teaching of lyric poems and to the poems reflecting the historical past of the people and the Artsakh liberation struggle.

Key words*: Motherland, Artsakh, school, struggle, learners, poetry, literary family of Artsakh.*

Արցախյան ազգային-ազատագրական պայքարն արտացոլող պոեզիայի ուսուցումը հանրակրթական դպրոցի առաջնահերթ խնդիրներից է, որովհետև այն հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական, բախտորոշ էջերից է՝ հավասար Ավարայրի ու Սարդարապատի հերոսամարտերին:

Հայ գրականության դասաժամերին աշակերտներին ծանոթացնում ենք հայ գրականության անբաժանելի մասը կազմող Արցախի գրական ընտանիքի ստեղծած հայրենասիրական քնարերգությանը:

Սովորողներին, որպես նախաբան, հիշեցնում ենք, թե ինչպես 1988-ի փետրվարից Պատմական Հայաստանի 10-րդ նահանգը՝ Արցախ աշխարհը, ոտքի ելավ պահանջատիրոջ իրավունքով: Նա խորհրդային իշխանության բարձրագույն ատյաններին ներկայացրեց Մայր հայրենիքին վերամիավորվելու արդարացի վճիռը:

Դասի ընթացքում հիշեցնում ենք, որ աշխարհասփյուռ հայությունը խորապես գիտակցեց պահի կարևորությունը և սատարեց արցախցիներին:

Ե՛վ Արցախում, և՛ աշխարհի չորս ծագերում յուրաքանչյուր հայ սպասում էր, որ խորհրդային իշխանությունները կցուցաբերեն ողջախոհություն և խաղաղ ճանապարհով կիրականացնեն արցախցիների դարավոր երազանքը:

Աշակերտներին հասկացնում ենք, որ ԽՍՀՄ իշխանությունները մերժեցին Արցախի արդարացի պահանջը և շրջափակման մեջ առան մեր պապերի բնօրրանը: Ընդգծում ենք, որ մեր ժողովուրդն զգաց բռունցքվելու անհրաժեշտությունը իրեն պարտադրված պատերազմում:

Այնուհետև բացատրում ենք, որ արցախյան պատերազմին զինվորագրվեց նաև հայ գրականությունը: Բանաստեղծներն անմիջապես մարտաշունչ երգեր գրեցին, ստեղծեցին հայրենասիրական բալլադներ, լեգենդներ, պոեմներ, ռեքվիեմներ, չափածո ակնարկներ՝ ազդարարելով, որ մեր ժողովուրդը ինքնահաստատման իր խոսքն ուղղում է աշխարհին՝ որպես ազատ ու անկախ ապրելու վճռականություն:

Արցախյան շարժման առաջին օրերից սկսած, իրենց կրակոտ խոսքն ասացին ականավոր գրողներ Վ. Դավթյանը, Ս. Կապուտիկյանը, Գ. Էմինը, Հ. Սահյանը, Ռ. Դավոյանը, Մետաքսեն, Բ. Ջանյանը և շատ ուրիշներ:

Դասի հենց սկզբին ընթերցում ենք Մետաքսեի «Իմ հայրենի Ղարաբաղ», Վ. Դավթյանի «Արցախ», Ս. Կապուտիկյանի «Ղարաբաղի բարբառը», Գ. Էմինի «Ազատատենչ Արցախ» և այլ գործեր՝ վերլուծում հանգամանորեն: Այնուհետև բացատրում ենք, որ չնայած պատերազմական դժվարին պայմաններին և գիրք տպագրելու սուղ հնարավորություններին, Արցախում ապրող և ստեղծագործող բանաստեղծներն ընթերցողի սեղանին դրեցին ուշադրության արժանի ժողովածուներ: Եվ որպես օրինակ՝ ցույց ենք տալիս Վ. Հակոբյանի «Արցախա ծուխ», «Ամարասի զանգերը», «Տաճարն Աստծո», «Սոսե» ժողովածուները, Ս. Խանյանի «Կարոտի կրակներ», «Արցախյան դողանջներ», «Արցախի արծիվը» պոեմները, Գ. Գաբրիելյանի մարտական երգերի շարքը, Հ. Բեգլարյանի «Հրաշք երկիր իմ Ղարաբաղ», «Արցախն Ավարայր», Ն. Ավագյանի «Հասուն իմ հասկ», Ա. Հովհաննիսյանի «Ավանդատուն», Ռ. Եսայանի «Նժար», Ն. Գասպարյանի «Հավատ Արցախի», Հ. Ալեքսանյանի «Կենսադաշտ» և այլ ժողովածուներ, Դ. Միքայելյանի քնարական երգերի գիրքը՝ նվիրված մեր անձնուրաց նահատակների հիշատակին:

Այնուհետև աշակերտներին ծանոթացնում ենք արցախյան շարժման և պատերազմի երեք փուլերին:

Նշում ենք, որ առաջին փուլն ընդգրկում է 1988-ի փետրվարից մինչև 1991թ-ի նոյեմբերը, երկրորդը՝ 1991-ի նոյեմբերից 1994-ի մայիսը, երրորդն սկսվում է 1994թ. մայիսից մինչև մեր օրերը և ընդգծում ենք, որ այդ տարիներին ստեղծված գրականությունը մեր ժողովրդի հերոսական պայքարի անկոտրուն կամքի տարեգրությունն է:

Սովորողներին տեղեկացնում ենք նաև, որ Ղարաբաղյան շարժման առաջին օրերին, որպես ոգեշնչումի կոչ, հնչում էր Մեծն Հ. Շիրազի՝ տարիներ առաջ գրած «Ղարաբաղի ողբը» բանաստեղծությունը:

Նրա մեջ մեծ բանաստեղծի մարգարեական նրբանկատությունն ու հեռատեսությունն է խոսում: Այն դարձել էր շքերթների և հանրահավաքների օրհներգ:

Բանաստեղծությունը հանձնարարում ենք աշակերտներին՝ անգիր սովորելու: Եվ տեսնել է պետք, թե աշակերտներն ինչպիսի ոգևորությամբ են արտասանում հետևյալ տողերը.

Ղարաբաղը մորս կանչն է՝ ինձ է կանչում հույսով տրտում,
Ղարաբաղը իմ կակաչն է՝ կարմիր, բայց սև ունի սրտում:
Ա՜խ, ե՞րբ պիտի ելնես բանտից՝ Նախիջևանի ձեռքից բռնած,

Նորից ազգի ավազանում հայ մկրտվես, հայ Ղարաբաղ[1]:

[1] Իմ արխիվից

Սովորողները յուրացնում են Ղարաբաղյան շարժման և Արցախյան պատերազմի երգը՝ համահունչ զենքի ուժին, որը զինվորագրվել է հայ ժողովրդի ազատագրական պայքարին՝ Արցախը համարելով ամբողջ հայության ազատության և գոյատևման ջահակիրն ու ազատամարտիկը:

Դասարանում, գրականության ժամերին, ընթերցում և մեկնաբանում ենք Վ. Հակոբյանի «Արցախա ծուխ» պոեմը, նշում, որ այդ ծուխը մեռոնի բույր է, պապ ու տատի շունչ, հոր ու մոր շոյանք, մանկանց ժպիտ, հայրենի հողի գարնանային ցող, հավատ ապագայի հանդեպ: Վ. Հակոբյանը միաժամանակ հնչեցնում է հարատևելու կոչը, հողը բերդ դարձնելու վճռականությունը, արտասանելով այս տողերը.

Մենք՝ որդիք Հայկի, արդար ու վսեմ,
Ցավ ու դառնություն այդ ե՞րբ չենք տեսել,
Բայց ոչ մի անգամ, Աստված է վկա,
Արցախին հաղթող չի եղել, չկա[1]…

Անդրադառնալով Վ. Հակոբյանի երկերին՝ գնահատում ենք նաև «Սոսե» գիրքը, որի միջով ընդգծված անցնում է պայքարի գաղափարը: Վ. Հակոբյանն էր, որ առաջինը ձեռք մեկնեց Սոսեի կերպարին, որը խորհրդանշում է հայ ֆիդայուհուն:

Ահա ինչու բանաստեղծը նրանց ներկայացնում է որպես սիրո և հայրենիքի ամբողջություն, անզիջում պայքար:

Գրականության դասերին զգալի տեղ ենք հատկացնում Գ. Գաբրիելյանի ստեղծագործությանը: Նշում ենք, որ Արցախը լեզու առած խոսում է նրա գրչի տակ: Նրա երգերում Թարթառը, Մռովը, Քիրսը, Կարկառը, Խաչենագետը ոչ միայն աշխարհագրական անուններ են, այլև պատմության խորքերից առ այսօր քայլող զինվորներ:

Գ. Գաբրիելյանի գողտրիկ բանաստեղծությունները վերլուծելիս աշակերտները ինքնուրույն եզրահանգում են, որ բանաստեղծություններում հնչում են պատասխաններ ազերի վայ գիտնականներին, որոնք բացել են կեղծիքի վարագույրը և Հայոց Արցախը համարում են Ադրբեջանական տարածք:

Նշում ենք նաև, որ Գ. Գաբրիելյանը հորինել է տասնյակ մարտական երգեր: Դրանցից են «Ամարաս», «Դադիվանք», «Գանձասար» երգերը, որոնք արդեն մտել են հայկական բոլոր համույթների երգացանկի մեջ: Հետաքրքիրն այն է, որ որոշ աշակերտներ ոչ միայն արտասանում են, այլև կատարում են նրա երգերը: Մեր ուշադրության կենտրոնում ենք պահում Հ. Բեգլարյանի պոեզիան: Ուսուցանում ենք, որ նրա երգերում հայրենքիը սկսվում է Արցախից, ավարտվում է Արցախով: Նրա լավագույն բանաստեղծությունը «Ղարաբաղցին» հյուսվածքն է, որը մեր առաջարկով աշակերտները երգում են:

Խանդավառված հայրենասիրական վեհ գաղափարով՝ օրինակներ ենք բերում նաև բանաստեղծուհի Ն. Ավագյանի պոեզիայից, որտեղ նա կոչ է անում բոլոր երիտասարդներին մնալ Արցախում, պաշտպանել մեր օջախները, մեր հողը:

Անդրադառնում ենք նաև բանաստեղծ Ա. Հովհաննիսյանի քնարերգությանը, նշում, որ նա դիմում է Արարչին՝ տագնապի աղոթքով.

Օ՜, երկնային, ասա, ինչպե՞ս վարվել,
Ավա՛ղ, ճեղք է տալիս սրբատունս:[2]

Ա. Հովհաննիսյանը դիմելով Ամարաս վանքին, որ կերտվել է 4-րդ դարի սկզբին, Գ. Լուսավորչի ցուցումով, երազում է տեսնել նրա ազատ գործընթացը:

Արցախյան շարժման հենց սկզբից մեր պոեզիայի նահապետներից մեկը՝ Բոգդան Ջանյանը, առաջին հերթին հնչեցրեց տագնապի երգը: «Տրտու գետը» բանաստեղծությունն այդ խռովքի լավագույն արտահայտություններից է:

Արցախի գրական ընտանիքի ճանաչված բանաստեղծներից է Արկադի Թովմասյանը, որն իր երգերի գիրքը վերնագրեց «Արցախցի եմ ես»:

[1] Վ. Հակոբյան, Արցախա ծուխ, «Լույս» հրատ.,1982թ, էջ5
[2] Ա. Հովհաննիսյան, «Ավանդատուն», Ե, «Նաիրի» հրատ.1991թ, էջ 11

Սովորողներին բացատրում ենք, որ դա ազգային արժանապատվության խոստովանություն է: Նրա քնարական հերոսը բանաստեղծական զգացումների մեջ է առնում Գանձասարն ու Ամարասը, Մռովն ու Քիրսը, Շուշին ու Վարարակնը և անձնավորում նրանց որպես հավերժության կենդանի ճամփորդներ:

Մեր հանձնարարությամբ՝ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են ուսումնասիրում բանաստեղծ Սոկրատ Խանյանի ստեղծագործությունները: Արցախյան ազգային-ազատագրական պայքարի առաջին օրերից սկսած Ս. Խանյանը անմիջապես, իր գրչեղբայրների հետ միասին մասնակցեց հանրահավաքներին՝ հնչեցնելով պայքարի իր երգերը, որոնցում զգացվում է օրվա պահանջը՝ մարտնչել մինչև վերջնական հաղթանակ…Այդ տարիներին Ս. Խանյանը գրել է բանաստեղծություններ, պոեմներ, լեգենդներ:

Ուշագրավ է նրա «Արցախցիներ», «Արցախ», «Գանձասար», «Ամարաս», «Հավատ», «Արծվաշեն», «Ազգային հարց», «Արցախի դասը», «Իմ մայր ժողովուրդ» և այլ ստեղծագործություններ:

Ձենքի և երգի միասնության գաղափարը միշտ համակել է Ս. Խանյանին: Դա նրա պոետական հավատամքն է, մի սկզբունք, որ ապացուցում է ժողովրդի հանդեպ գրողի ակտիվ կենսադիրքի պահանջը:

Դասարանում ընթերցելով Ս. Խանյանի բանաստեղծությունները՝ աշակերտները հստակ պատկերացում են կազմում Արցախյան գոյամարտի թեժ օրերին տեղի ունեցած դեպքերի մասին: Այդ ժամանակաշրջանում, Ս. Խանյանը աշխատելով Արցախի պետական համալսարանում, որ այդ տարիներին դարձել էր քաղաքական պայքարի կենտրոն, միաժամանակ լինելով գրողների միության ակտիվ անդամներից մեկը, գտնվում էր գոյամարտի գաղափարական խմորումների առանցքում: Այստեղից էլ նրա ստեղծագործությունների հագեցվածությունը, շիկացած լիցքը՝ թարմ արտահայտչամիջոցներով:

Նրա լավագույն ստեղծագործություններից է «Արցախցիներ» քնարական պոեմը: Չորս գլուխներից բաղկացած ստեղծագործության մեջ ներկայացվում է մեր ժողովրդի հազարամյա պատմությունը:

Պոեմի հյուսվածքի մեջ բերելով Գրիգոր Նարեկացու զրույցն Աստծո հետ, բանաստեղծն ընդգծում է հայ մարդու ընդվզումն անարդարության դեմ:

Այդ հասկանալով, խելոք մեր պապերը, իրենց «ըմբոստությունը դարձրին դրոշ ու զենք» և շշնջացին.

…Մեր Աստվածը մենք ենք,
Մենք ենք մեր Աստվածը մեր սարերի վրա,
Մեր սարերից բարձր մեր հոգու մեջ,
Մեր ձեռքերով պիտի վառենք աստղերը մեր.
Եվ հայ պիտի ապրենք դարեր անվերջ:[1]

Բանաստեղծը հոգեբանական բացահայտումներով նշում է Մեծ Հայքի 10-րդ նահանգը կազմող Արցախի նորօրյա պայքարը և հավատով ընդգծում արցախցիների ոգու արիությունը, վտանգի ժամին մեկը մյուսին թև-թիկունք դառնալու ավանդական սովորույթը:

Այնուհետև վերլուծում ենք նրա «Ազգային հարցը» պոեմը, որտեղ բանաստեղծը պրոբլեմի արդար լուծումը բխեցնում է մեր պապերի հայեցակետից, որի արմատները հասնում են մեր ժողովրդի առասպելական ժամանակներին և «Սասնա ծռեր» դյուցազներգության պատգամներին:

1988-ի հոկտեմբերի 19-ին Ս. Խանյանը գրում է «Արցախի դասը» բանաստեղծությունը՝ անդրադառնալով Ամարասում Մեսրոպ Մաշտոցի բացած Արցախի առաջին դպրոցի պատմությանը, ներկայացնում մեր դարավոր հերոսական ընթացքը: Բանաստեղծը Արցախի դասը համարում է ինքնության և ապրելու դաս և ընդհանրացում.

Ով մայր Արցախ, քո փրկության այս ժամին,
Քո զինվորն ենք՝ հավերժ կոփված քո կամքով,
Ամարասում դու դաս առար Մաշտոցից,

[1] Ս. Խանյան, Արցախյան ղողանջներ, ԵՊՀ. հրատ, 1994թ, էջ 47

Քո գրկի մեջ պիտի սերտենք դասը քո:[1]

Ս. Խանյանի երգերում հպարտության զգացումն ակունքվում է ժողովրդի հերոսական անցյալից և առօրյա արդարացի պայքարից:

Նրա լավագույն բանաստեղծություններից են՝ «Պապիս պատիվը», «Տեսիլք», «Զավակը», «Խաչի պապս», «Կավագ վանքը» և այլն:

Ս. Խանյանը երգեր է ձոնել նաև Շուշիին: Շուշին հարազատ է քնարական հերոսին: Քաղաքը նրա արմատներն է, հոգին, երազը, որովհետև կառուցվել է հայի ձեռքով.

Շուշի, պապիս կերտած քաղաք,
Շուշի, հորս երգած քաղաք,
Դու իմ տատի նախշուն պատկեր,
Իմ անուշ մոր հույսի պատկեր:[2]

Թուրքը նենգությամբ խլել է Հայոց Շուշին, բայց նրա հին տերը՝ հայը, այն հետ վերադարձնելու հույսը միշտ վառ է պահել և եկել է պահը, հայ ժողովրդի անձնուրաց զավակների կյանքի գնով «կրկին մերն է դարձել Շուշին»: Հարազատ որդու ցնծությամբ քնարական հերոսը դիմում է փրկված քաղաքին և հաստատում.

Էլ ոչ մի օր, ոչ մի ժամի,
Քեզ չի գերի չար թշնամին,

Հայի ձեռքով կերտված Շուշի,
Հայի արյամբ փրկված Շուշի:[3]

Երեխաներին ծանոթացնում ենք նաև Դ. Միքայելյանի երգերին:

Արցախյան պոեզիայի գողտրիկ էջերից են նրա հայրենապատումի լավագույն օրինակները: Դ. Միքայելյանի բանաստեղծական ինքնախոստովանանքը հասնում է սովորողների հոգուն ու սրտին՝ առանձնապես հետևյալ տողերը.

Հողից եմ առնում ես
Իմաստության գանձերը բոլոր…
Արցախ աշխարհիս զորեղ սրտից է
Փոխանցվել մարմնիս իմ էությունը[4]…

Աշակերտները ընթերցելով և վերլուծելով այդ տողերը, հանգում են այն եզրակացության, որ բանաստեղծի հավատի ուղեկիցը և խոհերի արձագանքը Արցախն է: Արցախյան շարժմանը նվիրված բանաստեղծություններն ու պոեմները տասնյակ հատորներ են կազմում:

Մեկ հոդվածով հնարավոր չէ ներկայացնել այդ ամենը: Կարևորն այն է, որ ժողովրդի ազատագրական պայքարը պատմության գանձարան է, որի մասին ստեղծվել է բարձրարվեստ պոեզիա , որի ուսուցումը պարտադիր է նաև մեր հանրակրթական դպրոցում, ուր սովորում են մեր վաղվա քաղաքացիներն ու հայրենապաշտ ազատամարտիկները:

[1] Ս. Խանյան, Արցախյան ղողանջներ, ԵՊՀ.հրատ., 1994թ., էջ 47
[2] Իմ ծիածանը, «Սոնա» հրատ.2000թ. էջ.43
[3] Նույն տեղում, էջ 43
[4] Դ. Միքայելյան, Հավատի ժամ, Ե., 1989թ., էջ 16